

## ՄԵՐՈՒԺԱՆ ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ

Հայ-Ռուսական (Ալավոնական) համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

### ՆԱԽՕ-Ի ԴԵՐԸ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅՈՒՄ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ



Հարավային Կովկասը՝ Անդրկովկասը, ավանդաբար հանդիսանում է տարբեր ուժերի՝ գերտերությունների և ուժային կառույցների, շահերի և հակասությունների բախման հանգուցակետ: Այս հանգամճքը անկասկած իր հետքն է բողեղ տարածաշրջանի պետությունների պատմական զարգացման վրա: Տարեցտարի Հարավային Կովկասը ավելի ու ավելի է ընդգրկվում միջազգային ինտերացման գործընթացների մեջ:

Խորհրդային Միության քայլայումը և սառը պատերազմի ավարտը հնարավորություն տվեցին վերացնել պետությունների զաղութացված վիճակը Խորհրդային Միությունից իսկ եթոքադարձական միավորումները՝ ստալինյան տոտալ քաղաքականության գործերի առկայությունը:

Այս քաղաքական միավորումների անջատողական առաջնորդները նշում են, որ ԽՍՍՀՄ-ի վիլոգումից հետո իրենց երկրները ապագադուրացվեցին և, հետևաբար, պետք է դիտարկվեն որպես առանձին պետություններ: Ի տարբերություն դրան՝ նախկին զաղութացման «տիտղոսային»՝ նախկին խորհրդային միության ազգերը, չեն կարողանում հաշտվել նախկինում իրենց պատկանող հողերի նկատմամբ վերահսկողության կորուստների հետ<sup>1</sup>:

Իր ապագա անվտանգությունը Վրաստանը տեսնում է, ամենայն հավանականությամբ, միանական եվրոպանույան անվտանգության համակարգի համատեքստում: Վրաստանը մեծ ակտիվություն է ցուցաբերում ընդհանուր անվտանգության եվրոպական համակարգի մեջ ներգրավվելու հարցում: Փաստացիորեն վրացական քաղաքականության այս ուղղությունը հանդիսանում է հիմնական:

Նշենք, որ Վրաստանը բնութագրվել է անվտանգության դեֆիցիտով և անկայունությունով՝ 1991 թ-ից՝ անկախություն ձեռք բերելու պահից: Անկախությունը հետո ընկած ժամանակահատվածում այստեղ երկու արյունահետ և երկարատև պատերազմներ են տեղի ունեցել Վրաստանի և իր ինքնավարությունների միջև, և երկու պատերազմներն ել ավարտվել են կենտրոնական կառավարության պարտությամբ:

Վրաստանում ի սկզբանե գիտակցվում էր սեփական ուժերով առանձնացված տարածքների վերադարձի անկարողությունը: Ուստի՝ Վրաստանը ստիպված էր դիմել Երրորդ ուժերի օգնությանը: Հակամարտությունների ողջ ընթացում Ռուսաս-

տանը համեստ էր զայխ որպես երրորդ կողմ: Վրաստանը պատրաստ էր վատահել վճռորոշ դեր Ռուսաստանի Դաշնությանը տարածքային ամբողջականության պահպանման գործընթացում, քանի որ Մուլգան հնարավորություն ուներ ապահովել երկխոսություն բոլոր կողմերի հետ, հասնել խաղաղության իր խաղաղապահական առաքելության ժամանակ:

Ինչ վերաբերում է ՆԱԽՕ-ին, ապա պետք է ընդգծել, որ Վրաստանում Հյուսիսատլանտյան դաշինքի վերաբերյալ գոյություն ունի ամենակարող միության նվազ իդեալականացված պատկեր, որը հաղթանակ է տարել սառը պատերազմում: Դեռ ավելին՝ հասարակական կարծիքը դիտարկում է սերտ համագործակցության ձգտումը հետագա Դաշինք մուտք գրձելու՝ որպես ազգային անվտանգության և եվրոպական քաղաքակրթությանը Վրաստանի պատկանելիության միակ երաշխիք:

Ինչո՞ւ է առաջնորդվում Վրաստանը ՆԱԽՕ-ի մեջ ինտեգրվելու հարցում վրաց-արքական և վրաց-հարավկոսիական հակամարտությունների և գլխավոր մրցակիցների՝ Վրաստանի, Արխազիայի, Հարավային Օսիայի և Ռուսաստանի շահերի տեսանկյունից:

Ինպես ներկայացվում է, այստեղ պարզորդ կերպով նկատելի են Հյուսիսատլանտյան դաշինքին ամդամակցություն երեք առավել նշանակություն ունեցող ձգտման պատճառներ:

Առաջին հերթին կասկածից վեր է հանդիսանում այն, որ Վրաստանը դիտարկում է ՆԱԽՕ-ն որպես հիմնական գրձիք, որի օգնությամբ նա իր կատարյալ վերահսկողության տակ կկարողանա վերադարձնել իրենից անջատված Հարավային Օսիայի և Արխազիայի հանրապետությունները, ինչի մասին են վկայում Վրաստանի բարձրաստիճան դեկավարների բազմից հայտարարությունները: Քանի որ, ամենայն հավանականությամբ, խաղաղ ճանապարհով Արխազիան և Հարավային Օսիան չեն վերադառնա Վրաստանի կազմ, պարզ է, որ այս խնդրի լուծման համար հիմնական շեշտը պետք է դնել ուղղական լուծման վրա՝ օգտագործելով ՆԱԽՕ-ի ուսուրսները:

Երկրորդ՝ հավելյալ նպատակը սերտորեն կապված է առաջինի հետ, ուստի՝ Վրաստանի ձգտումն է վերջնականացնել ազատվել Ռուսաստանի քաղաքական և ռազմական ազդեցությունից:

Երրորդ՝ ինչը նույնական շատ կարևոր է

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի համար, հաշվարկը կատարվում է այն բանի գիտակցամբ, որ ՆԱՏՕ-ին անդամակցվելը նրան կարող է բերել զգալի նյութափինանական դիվլիմենտեր:

1992 թ-ին Վրաստանը ճանաչվեց ՄԱԿ-ի կողմից և դարձավ վերջինիս անդամը և մտավ Conference on Security and Cooperation in Europe (CSCE)՝ «Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի» (ԵԱՀՍ) մեջ, որը 1994 թ-ին վերանվեց «Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն» (ԵԱՀԿ) ՕԲԸ, (Organization for Security and cooperation in Europe (OSCE))<sup>2</sup>: 1992 թ-ի մարտին իշխանության գլուխ է Շեվարդնաձեի գալուց հետո վերջնականապես ձևավորվեց Վրաստանի արտաքին քաղաքականության վեկտորը, որը կայանում էր Արևոտքի հետ առավելագույնս մերձեցման մեջ:

1993 թ-ի սեպտեմբերյան դեպքերը, որոնք հանգեցրեցին Արխագիայում վրացական գորքերի պարտությանը, և քաղաքացիական պատերազմի էսկալացիան ստիպեցին Վրաստանի դեկավարությանը շտկել արտաքին քաղաքական ուղղվածությունը և միանալ ԱՊՀ-ին<sup>3</sup>: Սակայն այս մոտեցումը չի բացառում «քաղմավեկտորային» քաղաքականության իրականացումը պետական անվտանգության ապահովման ոլորտում: «Եկավարվելով պրագմատիկ պատկերացումներով՝ վրացական դիվանագիտությունը ձգուում էր օգտակար կապեր հաստատել բոլոր հենարավոր ուղղություններով: Այսպես՝ հաշվի առնելով Ռուսաստանի շահերը Հարավային Կովկասում՝ Վրաստանը միևնույն ժամանակ շիրաժարվեց ամուր կապեր հաստատել Արևոտքի հետ:

Վրաստանի կապերը ՆԱՏՕ-ի հետ ավելի մեծ քափ ստացան 1994 թ-ի հունվարի 11-ից հետո, եթե ՆԱՏՕ-ի գագարնաժողովում ընդունվեց «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը (Partnership for Peace (PfP))<sup>4</sup>: Այն հաստատելուց հետո վեց ամիսների ընթացքում ծրագրում մասնակցելու ցանկություն արտահայտեցին 27 երկրներ: Վրաստանը առաջիններ մեկն էր, որ միացավ այս ծրագրին 1994 թ-ի մարտի 23-ին:

1999 թ-ի օգոստին Վրաստանը միացավ ՆԱՏՕ-ի և գործընկեր-եկրների համագործակցության հասունի ծրագրին պաշտպանության պլանավորման ոլորտում Planning and Review Process (PARP)<sup>5</sup>: Այս գործընթացները Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ մտցրեցին իրենց շտկումները նաև և առաջ Վրաստանը սույն տարրում դրւու եկավ Համագործակցության երկրների «Հավաքական անվտանգության պայմանագրից», որում նախկինում ընդգրկված էր և դրանով իսկ վերջնականապես ընտրեց ամերիկանա արտաքին քաղաքական ուղղվածություն:

1999 թ-ի նոյեմբերին Ստամբուլում կայացած ԵԱՀԿ -ի գագարնաժողովում որոշում ընդունվեց մինչև 2001 թ-ի հուլիսի 1-ը Վրաստանից ուստական քաղաները դրւու բերելու վերաբերյալ: Այս պահանջը առաջ քաշեցին Արևոտքի երկրներն ու Թուրքիան, ինչը էլ ավելի բարդացրեց Վրաստանի և Ռուսաստանի՝ առանց այն էլ բարդ հարաբերությունները:

բյունները:

Վրաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի միջև հարաբերությունները այլ մակարդակի բարձրացրեցին ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացվող ամենամյա համատեղ ուսումնամարզումները և միջոցառումները: 2001 թ-ի ամռանը ծովափնյա վրացական Փոքի քաղաքի շրջակայրում իրականացվել լայնամասշտար բազմազգ ուազմածովային ուսուցումները «Cooperative Partner – 2001», որում ներառված էին մոտ 4300 զինվորականներ, տարրեր դասի 29 նավեր, 15 ուազմական և բեռնափոխադրող ինքնարդիններ<sup>6</sup>:

Ներկայումս Վրաստանի և ՆԱՏՕ-ի համագործակցությունը հիմնականում իրականանում է «ՆԱՏՕ-ի հետ համագործակցության անհատական ծրագրի» շրջանակներում, Individual Partnership Action Plans (IPAP), որը ընդունվել է 2004 թ-ի օգոստոսին<sup>7</sup>: Այս փաստաթղթում որոշված են գործընկեր-երկրների նպատակներն ու նպատակակետերը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ քաղաքական խորհրդակցությունների անցկացման շուրջ, որոնք վերաբերում են պաշտպանության, անվտանգության և ուազմական պլանների ոլորտներում բարեփոխումների իրականացմանը, այդ թվում նաև՝ ՆԱՏՕ-ի ուազմական ուժերի հետ համագործակցության հնարավորությունները:

IPAP անհատական համագործակցության ծրագրի շրջանակներում հաստատվել են գործընկեր-երկրների նպատակներն ու նպատակակետերը ՆԱՏՕ-ի հետ քաղաքական խորհրդակցությունների իրականացնելու համար, որոնք վերաբերում են անվտանգության, պաշտպանության և ուազմական քաղաքականության ոլորտներում բարեփոխումներ կատարելուն, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի ուազմական ուժերի հետ համագործակցության հնարավորությունները: Այս խնդիրները արդեն լուծվում են PARP շրջանակներում PfP ծրագրի ենթատեքստում: Բացի այդ՝ այդ ծրագրերում ձևակերպված են ուազմական ուժերը ժողովրդական մոտեցմամբ դեկավարելու, բնակչությանը տեղեկատվությանը ապահովելու, զիտության, տնտեսության և արտակարգ իրավիճակներում համագործակցելու խնդիրները<sup>8</sup>:

Վրաստանը նաև փորձում է օգտագործել քաղաքական խորհրդատվությունների մեխանիզմը՝ IPAP շրջանակներում ՆԱՏՕ-ի գործընկեր-պետություններին Ռուսաստանի հետ իր բարերարությունների մեջ ներքաշելու նպատակով, զիսավորման Արխագիայի և Հարավային Օսիայի հարցերում<sup>9</sup>: Անհրաժեշտ է նշել, որ ՆԱՏՕ-ի երկրները չեն ձգուու ներգրավվել Արխագիայում և Հարավային Օսիայում հակամարտությունների կարգավորման հարցերում: Այս առումով՝ ՆԱՏՕ-ի կողմից Վրաստանին տրված միակ աջակցությունը Ռուսաստանի առաջ դրած պահանջն է՝ իրականացնել պարտավորությունները, որոնք Ռուսաստանը ստանանել է 1999 թ-ին Ստամբուլի ԵԱՀԿ գագարնաժողովի ժամանակ, որում Մուկվան համաձայնվել է իր բազությունը բերել Վրաստանից մինչև 2001 թ-ի հուլիսի 1-ը<sup>10</sup>:

Անյսու, Ռուսաստանը չի համարվում չեզոք հաշտարար տվյալ հակամարտությունների կարգավորելու բանակցությունների ժամանակ: Եվ պաշ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տոնական թրիխսի ցանկությունը՝ մեծացնել միջնորդների քիվը և բանակցային գործընթացից առավելագույնս հեռացնել Մուկվային, ամբողջովին հասկանալի է: Սակայն Սույսումն և Ցիսինվային, ինչպես նաև Կրեմլը գտնում են, որ այլ պոտենցիալ միջնորդները չեն հանդիսանում չեզոք և օրենտիվ հաշտարարներ՝ այս տարածաշրջանում հետապնդելով իրենց շահերը: Կարելի է ենթարկել, որ ԱՄՆ-ի հիմնական նապատակը հանդիսանում է ոչ թե հարավուհական և արխազական հակամարտությունների կարգավորումը, այլ իր դիրքերի հետազա ամրապնդումը այս տարածաշրջանում և այստեղի Ռուսաստանի դուրս մղելը:

ԱՄՆ-ում հասկանում են, որ քաղաքական խնդիրների համային լուծում պահանջելով լիիվ անօգուտ է. այն կարող է հանգեցնել տարածաշրջանում լարվածության էլ ավելի սրացմանը: Հյուսիսատլանտյան դաշինքի կապակցությամբ կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ն անմիջականորեն ներքաշված չէ Վրաստանի տարածքում հակամարտությունների մեջ: Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև եղած ռազմական համագործակցությունը սահմանափակվում է գործունեության ավանդական ձևերի շրջանակներում՝ «Հանագործակցություն հանուն խաղաղության»:

Տարածաշրջանում խաղաղապահ ուժերի միջազգայնացումը հաճախ դիտարկվում է Արևմտաքում դրանք Վրաստանում Ռուսաստանի ազդեցության սահմանափակման գործիք: Այս կոնցեպցիայի հիմքում ընկած դրույքը շատ պարզ է՝ նա, ով խաղաղապահի դեր է կատարում, ստանում է քաղաքական վերահսկողություն հակամարտության տարածաշրջանի վրա, որը նա ավելի շուտ կարող է ամրապնդել և չի հրաժարվի դրանից հակամարտության կարգավորումից հետո նույնպես:

Մուկվան Արխազիայի և Հարավային Օսիայի հետ իր սերտ հարաբերությունները բացատրում է այն բանով, որ երկու հանրապետությունների քնակիցներն են մեծամասմբ հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ: Ձև՝ որ ռուսական անձնագրերի ստացման գործընթացը Արխազիայի և Հարավային Օսիայի բնակչների համար ծայրաստիճան պարզեցված էր, որի հետևանքով այս հանրապետությունների բնակչների գերակշիռ մեծամասնությունը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի: Մերժ համագործակցությունը բացատրում մեկ այլ կարևոր փաստ է հանդիսանում Արխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը Ռուսաստանի կողմից, ինչպես նաև լայն պայմանագրա-իրավական բազան, որը կարգավորում է քաղաքական, ռազմա-մարտավարական, տնտեսական և այլ հարաբերությունները տվյալ պետությունների միջև: Իսկ իրականում Արխազիան և Հարավային Օսիան ներկայումս հանդիսանում են ամենաարդյունավետ լծակները, որոնց միջոցով Մուկվան կարող է ճնշում գործադրել Վրաստանի վրա:

Վրաստանի համար ռազմավարական նապատակ է հանդիսանում Ամերիկայի Միացիալ Նահանգներին իր կողմը ներգրավելը, վերոհիշյալ շճանաչված հանրապետությունների հետ հակամարտության հարցում, ինչպես նաև Արխազիայի և Հարավային Օսիայի հետ հակամարտություններին

նոր ձև հաղորդելը, որպեսզի այդ ձևը ունենա Ռուսաստանի և Արևմտաքության միջև հակամարտության տեսք, որտեղ Վրաստանը հանդիս է զայիս որպես Արևմտան աշխարհի մի մասնիկ:

Թրիխսիում հասունանում է այն բանի գիտակցումը, որ գրեթե ոչ մի քաղաքաղիվանագիտական միջոցները չեն մնացել, որոնց օգնությամբ հնարավոր կիմեր եւս վերադարձնել Արխազիան և Հարավային Օսիան Թրիխսիում իրավասության տակ, իսկ Մուկվան էլ առավել ևս ամեն կերպ արգելվ կանոնադրության դրան:

Նշենք նաև, որ 2004 թ-ին Մ. Սահակաշվիլի՝ իշխանության գլուխ գալուց հետո Վրաստանի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցությունը էլ ավելի խորացավ: Նոր իշխանությունները կարողացան քաղաքական հայտարարությունները փոխանցել գործնական դաշտ՝ պաշտպանության նախարար դարձավ քաղաքացիական դեմք, մեծացան ծախսերը, որոնք նախատեսված էին պաշտպանության ապահովման համար: 2004 թ-ի սեպտեմբերին Վրաստանը Աֆղանստան ուղարկեց 50 խաղաղապահներ, որոնք վերապատրաստում էին անցել 2002-2004 թթ. ամերիկյան հրահանգիչների կողմից: Սեպտեմբերի վերջին որոշում կայացվեց նրանց թիվը կրկնապատկել, 2003 թ-ին հրաքում վրացական զինվորականների թիվը հասավ 300-ի: 2004 թ-ին վրաց զինվորականների ջոկատը ծառայում էր բրիտանական ուժերի հետ համատեղ «International Security Assistance Force of Afghanistan» (ISAF) - «Աֆղանստանի անվտանգության և աջակցության միջազգային ուժերի» շրջանակներում՝ օգնելով անվտանգություն ապահովել Աֆղանստանում նախազահական ընտրությունների անցկացման ժամանակում:

2008 թ-ի փետրվարի 5-ին Վրաստանում արտահետք նախազահական ընտրությունների անցկացման ժամանակ գործադրաբար կատարվում էր երկիրը ՆԱՏՕ-ի կազմի մեջ ընդգրկելու հարցի հանրաբեն, որը բնակչության մեծ մասը՝ 77 տոկոսը, որոշում կայացրեց մտնել Հյուսիսատլանտյան դաշինքի մեջ: Այս հանրաբեն ցույց տվեց, որ Վրաստանի հասարակության մեծ մասը աջակցում է Վրաստանի կառավարությանը՝ ՆԱՏՕ-ի մեջ ինտեգրվելու քաղաքանությանը<sup>12</sup>:

Փաստորեն, չնայած երկրում հաստատված բարդ իրավիճակին, էրնոտարածքային խնդիրների «ըլուծված» լինելուն և Ռուսաստանի հետ ունեցած բարդ հարաբերություններին, Վրաստանին հաջողվեց մեծ առաջններացների հասնել ՆԱՏՕ-ի կազմի մեջ ինտեգրվելու գործընթացում, որը արտացոլվում է ինչպես բավականին ընդգրկուն իրավական բազայի առկայությամբ ռազմավարաքական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում, այնպես էլ պայմանավորվածությունների գործնական իրականացման ոլորտներում մի շարք հանդեպ միջոցառումները, վրացական բանակի վերափոխումը ՆԱՏՕ-ի ստանդարտներով, զգալի փինանսական միջոցների տրամադրումը անվտանգության ոլորտում բարեփոխումների իրականացման համար և այլն:

Չնայած այս բոլոր հաջողություններին՝ այնուամենայնիվ ՆԱՏՕ-ի կազմի մեջ Վրաստանի

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդդեման հարցը դեռ բաց է մնում: Արխազական և օսիական հակամարտությունների կարգավորման համար առաջնային դեր կունենա այն, թե ինչպես կղասավորվեն ուս-վրացական հարաբերությունները, թե ինչպիսի կառուցքածք կունենա Վրաստանի արտաքին քաղաքական ռազմավարությունը: Եթե Թբիլիսիի արատաքին քաղաքական ուղղվածությունը շփոփոխվի, եթե Վրացական ղեկավարները հաշվի չնստեն Ռուսաստանի շահերի հետ, ապա դժվար թե հնարավոր կլինի հոյս դմել իրավիճակի

կայունացման վրա՝ ըստ վրացական սցենարի:

Ետխորհրդային երկրներից միայն Վրաստանն է անշեղորեն զնում դեպի Հյուսիսաւլանտյան դաշինքի մեջ ինտեգրվելուն։ Եվ այս կապակցությամբ Ռուսաստանի կողմից կտրուկ բացասական արձագանքը վկայում է, որ այս երկիրը, ինչպես երևում է, դուրս կրերի ռուս-ամերիկյան հակասությունների առաջնային գիծ։

<sup>1</sup> Στίς Φηρανδζιάν ζ.Α. Λιαραριανή και λιαραριανή από την περιοχή της Καστοριάς στην Ελλάδα.

<sup>2</sup> Stiu Организация по безопасности и сотрудничеству в Европе,

[http://ru.wikipedia.org/wiki/Организация\\_по\\_безопасности\\_и\\_сотрудничеству\\_в\\_Европе.](http://ru.wikipedia.org/wiki/Организация_по_безопасности_и_сотрудничеству_в_Европе)

<sup>3</sup> Stiu Содружество Независимых Государств, <http://ru.wikipedia.org/wiki/>

<sup>4</sup> Стю Партиерство ради мира, <http://www.nato.int/issues/pfp/index-ru.html>

<sup>5</sup> Stiu Planning and Review Process, <http://www.nato.int/docu/handbook/2001/hb030208.htm>

<sup>6</sup> Տե՛ս մասնաւության վերաբերյալ՝ պահանջման առաջնային գործունեությունը կազմության առաջնային գործունեությունը է (Տե՛ս ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը՝ պահանջման առաջնային գործունեությունը)։

### საქართველოს სტრატეგია

ოქტომბერი 2001წ. გვ. 15.

<sup>7</sup> Ст. Индивидуальный план партнерства с НАТО,

<sup>8</sup> Стю Татикян С. Тенденции евроатлантической интеграции государств Южного Кавказа. //Центральная Азия и Кавказ.

N 4(46), 2006. C. 129.

<sup>9</sup> Ст. Там же. С. 130.

<sup>10</sup> Stiu Стамбульский документ 1999 года, <http://www.osce.org/ru/mc/39573>

<sup>11</sup> Ст. У Отношения между НАТО и Грузией, [http://www.nato.int/cps/ru/natolive/topics\\_38988.htm](http://www.nato.int/cps/ru/natolive/topics_38988.htm)

РЕЗЮМЕ

**РЕЗЮМЕ**  
*Роль НАТО в урегулировании конфликтов в Абхазии и Южной Осетии*

**Статья посвящена освещению роли НАТО в урегулировании грузино-абхазского и грузино-югоосетинского конфликтов, причем особое внимание уделено исследованию данных конфликтов в контексте евроатлантической интеграции Грузии. В данной статье предпринимается попытка анализа некоторых особенностей конфликтов в Абхазии и Южной Осетии и взаимоотношений России и НАТО. В этом же контексте рассмотрены перспективы отношений России и Грузии, а также сделаны выводы по вступлению Грузии в НАТО.**

## SUMMARY

## **SUMMARY**

*NATO's role in resolving conflicts in Abkhazia and Southern Ossetia.*

The article is devoted to the coverage of NATO's role in resolving the Georgian-Abkhazian and Georgian-South Ossetian conflict, with particular attention paid to the investigation of the conflicts in the context of Euro-Atlantic integration of Georgia. This article attempts to analyze some features of the conflicts in Abkhazia and South Ossetia and the relations between Russia and NATO. In the same context, the prospects for relations between Russia and Georgia are considered, as well as conclusions are drawn on the accession of Georgia to NATO.